

12487
12488
12489

Plingshy

181
182
183

H.M. SETIAN
PAPETERIE ET ATELIER DE RELIURE
CONSTANTINOPLE
Tchakmakdjilar Yokouch



Printed in Turkey

50

891.99
Z-85

Ա.Ս.

291
10723

Ժողովրդական Երգեր

ՄԻՀՐԱՆ ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



معارف نظارت جلیله سلطنه في ٧ شوال سنّه ١٣١٦ وقى ٤٠ نيسان سنّه ١٣١١
تاریخی و ٦٤ نومرولی و خصتنامه...له طبع اوئن شدر

Կ. ՊՈՂԻՄ

ՑՊԱԳՐ. Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

1895

391.99

Z-85 Փ Ն Ա Ր Ի Կ

12484

Ժողովրդական Երգեր



ՄԻՀՐԱՆ ՅՈՎՃԱՆՆԻՍԵԱՆ



2013


معارف نظارات جليله سنك في ٧ شوال سنة ١٢١٢ وف ٢٠ نيسان سنة ١٢١١
تاریخی و ٦٤ نومروی رخصتنامه سیله طبع اولنشدر

Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱԳՐ. Ց. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ
1895

2003

2861



181-2015

(9969)	181
39	



ՔՆԱՐԻԿ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ



Մինչեւ չի պազնէ հայրիկն իր տըղան,
Սիրտը շն ըըլլար, չի նստիր սեղան.
Եկո՛ւ, մանջո՛ւկըս, տո՛ւր ճակտէդ պաչիկ,
Ճաթօ՛, հայրիկին՝ ետքն ըրէ պաճիկ։
Ճաթօ՛, ճա՛, ճաթօ՛,
Ճաթօ՛, անուշիկ մանջուկըս, ճաթօ՛։

Քե՛ր նայիմ, մա՛նչս, տո՛ւր ճակտտ ճակտի,
Ճեղ մըն ալ ճաթօ՛, ճա՛ ընես պիտի։
Ճաթօ՛ մէկ հատիկ, փումիուլիկ մանջուկ,
Ճաթօ՛, սրտիս սէր, ճա՛, չամիչ աչուկ։
Ճաթօ՛, ճա՛, ճաթօ՛,
Ճաթօ՛, անուշիկ մանջուկըս, ճաթօ՛։

Առյու, լոյս աչուկներդ են մէյմէկ արեւ,
Սրեւն ի՞նչ ընեմ իմ զըլխուս վերեւ.
Բա՛ց աչուկներըդ որ սիրտըս բացուի,
Սչքըդ որ գոցես՝ երկինք կը գոցուի:
Ճա, ճա՛, ճախօ՛,
Ճաթօ՛, անուշիկ մանչուկըս, ճաթօ՛:

Արեւըդ սիրեմ, անուշիկ որդեակ,
Ես քեզմովկ'ապիմ, իմ յոյսս ես միակ.
Ի՞նչ ալ կլմանիս աղւոր հայրիկին,
Գիտնաս, չեմ փոխեր ես քեզ ոչ մէկին:
Ճա, ճա՛, ճախօ՛,
Ճաթօ՛, անուշիկ մանչուկըս, ճաթօ՛:

Ճաթօ՛, անուշիկ մանչուկըս, ճաթօ՛,
Ճա՛, ճակատ ճակտի, ետ ետ տար յետոյ.
Ճաթօ՛ հայրիկին, ճա՛թօ մայրիկին.
Չելէ նախանձի, ճա՛թօ երկինքին:
Ճա, ճա՛, ճախօ՛,
Ճաթօ՛, անուշիկ մանչուկըս, ճաթօ՛:



ԱՆՁԱՐԱԿ

Թաչնիկն իր բայնը հիւսեց չիւղերէ,
Տերեւներուն մէջ տարեր կախեր է.
Անուշիկ հովն բոյնն է կ'օրօրի,
կը մածնայ հոն տեղ ձագուկն օր օրի:

Անցաւ Ս. Սարդիս, անցաւ Անձարակ,
Վա՛յ գիմուն, չելաւ չըրաւ ճար ճարակ.
Անձարակ մարդն է որ չունի բունիկ,
կուկուկն է դարձեր, կը սըգայ մենիկ:



ՀՈՒՅՆՏԻԿ ԽԱԹՈՒԽՆԸ

Ան ի՞նչ նեղկուկ, ցածկուկ է,
Տո՞ւն է, չէ նէ, ճակուկ է.
Ես կը բանամ, կը գոցեմ,
Հոգ չէ՛, էվէլ տաքուկ է:

Ելայ զըրի հոն բունիկ,
Անանկ բունիկ դուք չունիք.
Հասա թըոչնիկն ան բունին,
— բուշնտիկն է, իմ կընիկ:

Կունտիկ կընիկ մը ունիմ,
Թընտիկ կընիկ մը ունիմ.
Ես իրենն եմ, ինք իմս է,
Թունտիկ սըրտիկ մը ունիմ:



ԽՈՉԻՆ ԱՌԱՋՔԻ



Ա՛յս, աս որչա՛փ արցունք լացի,
Մէկը չի կա՞յ ըսէ, «կեցի»,
Քենէ ՚ի զատ ես չունիմ ձար,
Աստուածորդիդ բազմաչարչար:

Որչափ որլամ, դարձեալ է քիչ,
Ամենօրհնեալ Յիսուս Փրրկիչ.
Փշվըշանքով, ես գիտե՛մ, ա՛յս,
Ճակատըդ ըրի արիւնթաթախ:

Իմ անուշիկ տոհմըս բարի,
Որչափ գովեմ դարձեալ քիչ է.
Սիրտը չի տար սուտ աշխարհի,
Լոյս հաւատքին նշան Խաչ է:

Կը պըլլուիմ ոտքիդ, ո՛վ Խաչ,
Քենէ ՚ի զատ ո՞ւր երթամ, ո՞ւր.
Յիսուս Փրկիչ քեզ չեմ թողուր,
Իս թողուցէք Խաչին առաջ:

Ինչո՞ւ համար սրտիկդ է խոց,
Լոյս լոյս աչքերդ ինչո՞ւ են գոց.
Ինչո՞ւ արիւն վազէ կողէդ,
Ինչո՞ւ կախուխա գողերու հետ:

Մեղքիս համար սրտիկդ է խոց,
Լոյս լոյս աչքերդ ինչ են գոց.
Ես հանեցի քեզ կախաղան,
Խօսքըդ ըրի ոտից կոխան:

Իմ անուշիկ տոհմըս բարի,
Որչափ գովեմ դարձեալ քիչ է.
Սիրտը չի տար սուտ աշխարհի,
Լոյս հաւատքին նշան Խաչ է:

Կը պըլլուիմ ոտքիդ, ո՛վ Խաչ,
Քենէ ՚ի զատ ո՞ւր երթամ, ո՞ւր.
Յիսուս Փրկիչ քեզ չեմ թողուր,
Իս թողուցէք Խաչին առաջ:

*


* *

Ա՛յս ի՞նչ կ'ըլլայ, մէյմը դարձի՛,
Ողորմութեամբ նայէ՛ ինծի՛.
Աշխարհք իմին ինչո՞ւ է պէտք,
Ես քուկդ եմ ա՛լ ասկից ետք:

Գառն Աստուծոյ , մեղքս քաւէ ,
Մէկ նայուածքդ ալ ինձի բաւ է .
Հերիք , հոգիս սեւեն մեղքեր ,
Լոյս երեսէդ իս մի՛ զըրկեր :

Իմ անուշիկ տոհմըս բարի ,
Որչափ գովեմ դարձեալ քիչ է .
Սիրտը չի տար սուտ աշխարհի ,
Լոյս հաւատքին նշան Խաչ է :

Կը պըլլուիմ ոտքիդ , ո՛վ Խաչ ,
Վենէ ՚ի զատ ո՞ւր երթամ , ո՞ւր .
Յիսուս Փրկիչ քեզ չեմ թողուր ,
Իս թողուցէք Խաչին առաջ :



ԽԹՄԱՆ ԳԻՇԵՐԸ

Ո՞ւր մընաց , ո՞ւր է աս տարի գարուն ,
Փոշին ու քըրտինը ամառ օրերուն .
Հատա՛ւ փառ ածուխ , կը տիր՛ ձըմեռ ,
Փողոցն ինկեր եմ , կէս մերկ կիսամեռ :

Խօսքը մէջերնիս , ա՛լ չունիմ շապիկ ,
Ոտքերս որ ըսես , շատոնց են ըստիկ .
Ախ՛ը կը քաշեմ չոր հացի մըքլոտ ,
Վա՛յ է ինձի սիս մարդուն չուչըլոտ :
Հա՛ , գէշ կատակ չէ , ծերուկ Ա . Յակոր ,
Թոթուէ՛ մօրուքըդ , ձուն թափէ լոփլոփ .
Ո՛ւֆ , ո՛ւֆ , ի՞նչցուրսէ , սառեր է գետին ,
Զըմեռ կայ ձըմե՛ռ , զեռ ասոր ետին :

*

Ի՞նչ ընեմ , հո՛զըս , անանկ ալ անանկ ,
Աղքատ եմ ծըներ կը մեռնիմ տընանկ .
Անօթի փորանց երբ մարդ կը ճողի ,
Բատակէ չ'ելլոր , ոլէտք չունի ճաղի :
Է՞ն եռքի օրն է օրը աղքատին ,
Երնէ՛կ անոր որ մարդ չ'ունի ետին .
Վա՛խ որ իմ ետիս ունիմ մէկ բունիկ ,
Զեռքըս կը նային զաւկըներ , կընիկ :

Ո՛ւֆ ո՛ւֆ ի՞նչ ցուրտ է, սառեր է դետին,
Զըմե՛ն կայ ձըմե՛ն, դեռ ասոր ետին.
Ան ո՞վ է կ'անցնի, հոս եկու բը՛ստ բը՛ստ,
Սա ձեռքէ սրոնէ տէ՝ ցատկենք վըզդ վըզդ:

◦◦◦

Վա՛յ, մարդ չէ եղեր, հովն է կը փըչէ,
Շուն մըն է կ'անցնի, էտիս կը հաչէ.
Հաչեցէք նայինք, շունե՛ր վոյրահաչ,
Ես լացըս լացի ձենէ շա՛տ առաջ:
Առտուն չի լուսյած կը մեռնիմ, շատ շատ
Թըշուառ մարդոցմէ կը պակսի մէկ հատ.
Ով ծնունդ չըներ, պէտք չունի ջատկի,
Անօթի շունը ցուրտէն կը սատկի:
Ան ո՞վ է կ'անցնի, հոս եկու, բըտ բը՛ստ,
Սա ձեռքէ սրոնէ տէ՝ ցատկենք վըզդ վըզդ.
Թըշուառ սըրտիկս կը նետէ թը՛փ թը՛փ,
Նայինք կը տաքնա՞նք տէ՝ ցատկենք վըփ վըփ:

◦◦◦

Թաղն է ճեփճերմակ, կը թափթփի ձուն,
Մութը կը կոխէ, չի մընար ձան ձուն.
Մինակ թէ հեռուն շուները կ'ոռնան,
Իրար խածնելով ցուրտը կը մոռնան:
Զեմ գիտեր, ինչո՞ւ սրտիս չի դար վախ,
Ցուրտը խելքս առաւ՝ զիս դարձուց ճիւաղ.
Ծընայ որ ասլիմ, բան մը հողըս չէ,
Շունը չի սատկիր երբ որ կը հաչէ:

Թըշուառ սրտիկս կը նետէ թը՛փ թը՛փ,
Նայինք կը տաքնա՞նք տէ՝ ցատկենք վըփ վըփ,
Տանըս մօսեցայ, կը դողամ թըռ թըռ,
Կնկանս ի՞նչ ըսեմ, երբ ընէ տըռ տըռ:

◦◦◦

«Կընի՛կ, էրիկդ է, ելի՛ր դուռը բաց,
Աս ի՞նչ է, Խըթման սեղա՞ն ես դըբած.
Չի կայ քու զոյզըդ, ոչ նըման քեզի,
Լըսողին երկու ականջը խօսի:

Սուտ է որ կ'ըսեն ապրողին ապրանք,
Մեռնողին պէտք է կանգուն մը պատանք.
Ա՛խ, մեզի պէտք է — ըսել չի խպնինք,
Երբ կ'ապրինք կին մը, երբ մեռնինք՝ երկինք:

Սիրով տաքցեր եմ, չեմ դողար թըռ թըռ,
Ա՛լ գոհ եմ բաղդէս, ի՞նչ ընեմ տըռ տըռ.
Կընի՛կ, է՛լ գոցէ՛, թող սուի գետին,
Զըմեռը թողունք մեր զըրան ետին:



ԹՀԱՏԵԼԻԿԻ ԵՄ

Թըստըլիկ եմ, պըզտըլիկ եմ,
Ճամբայ չիցտեմ, ո՞ւր երթամ.


Տնտես աղբար, շատ պվտիկ եմ,
Մեծնամ հապա կը կարդամ:

Թըստըլիկ եմ, պըզտըլիկ եմ,
Ճամբայ չիցտեմ, ո՞ւր երթամ.
Վարպետ տուտուն կըսմիթ կուտայ,
Դիրկն որ ելլամ, պաշիկ տամ:

Թըստըլիկ եմ, պըզտըլիկ եմ,
Ճամբայ չիցտեմ, ո՞ւր երթամ,
Դուռ դըրացի, վըկայ եղէք,
Պահւըտելու վար կերթամ:

Թըստըլիկ եմ, պըզտըլիկ եմ,
Ճտմբայ չիցտեմ, ո՞ւր երթամ.

Թաթիկ ապիս, անո՛ւշ մայրիկ,
Մանկապարտէղ ես կ'երթամ:



ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ՅՈՒԵԼԵԱՆՁ



Գարագա՛շ զաւակըս, թըշուառ Մըկրտիչ,
Քեղ ինտո՞ր նետեցին դըպրոցէն Փըրկիչ.
Վարժապետին ասա՞նկ պէտք է Յորելեան,
Ապրին մենծ-աղաներ հազա՞ր, յաւիտեան:

Վարժապէ՞տ. ի՞նչ չուտ ալկը մոռնան եղեր,
Եռուն տարուան տատանք, ա՛խ պարա՞պ
տեղ էր,

Զըսեմ, կըսեմ, չըլար, ոըրտիկըս կ'երի,
Կըսկիծներուս ձեռքը դարձեր եմ գերի:

Կտրած ամսականնին սրտէդ քաշեցին,
Մաշած կուրծքիդ զինն էր, զինն էր չոր
հացին.

Ցաւիդ պատճառն ո՞վ էր, ո՞ր մարդ վայ-
րերան,

Ետքը ետքը, ինտո՞ր զըլուխըդ կերան:
Ա՛խ, ան աչք-տնկողներ հացիդ պատառին,

Զէ որ մինակ խելքըդ, հոգիդ ալ առին,
Թող բացուի սրտերնինցուրտուն կծկտած,

Հիմա չունին որբերդ ինչուան ցամաք հաց:

Գարագա՞մ՝ զաւակըս, թըշուա՛ռ Մըկրտիչ,
Քեզ ինտո՞ր նետեցին զըպրոցէն Փըրկիչ.
Վարժապետին ասա՞նկ պէտք է Յորելեան,
Սպրի՞ն մենծ-աղաներ, հազա՞ր, յաւիտեան:

Երբ ոտքերնին ինկար, ըոին «լաւ է, լաւ»,
Վա՞խ տըզեկըս, չորհամ, մէկը թերչելաւ.
Ինչո՞ւդ պէտք էր օրդափս, ըլլալ արունգամ,
Խելը տալ խոլօք տղուն, անխելքին անգամ.
Հիմա քիչ մը ուշկեկ, չիյսեմ ի՞նչ խելք է,
Գրող կարդացաւ մը ելեր քեզ կ'երգէ.
Չուզեր, իրար մանցնիք ծնողք աշակերտ,
Չելլեք տղուս կանգնիք արձան հրաշակերտ:
Վարպետնուդ ողջութեան արժէքը զիտցէք,
Ետքը զըպրոցները կարդաւ կը զացէք.
Վարժապետ չէք գտներ, ո՞վ մեռնիլ կ'ուզէ,
Ո՞ր խենդը զիտնալսվ մահուան կը վազէ:

*
* *

Գարագա՞շ զաւակըս, թշուա՛ռ Մըկրտիչ,
Քեզ ինտո՞ր նետեցին զըպրոցէն Փըրկիչ.
Վարժապետին ասա՞նկ պէտք է Յորելեան,
Սպրի՞ն մենծ-աղաներ, հազա՞ր յաւիտեան:

Ա՞ս էր վարձքըդ օրդափս, հագնիլ հընոտի,
Զըրկանք է խենդենալ, մեռնիլ անօթի.
Փուճ տեղ գոները ինկար ձուներուն բուքին,
«Կորի՞ր սըկէց» ըոին, երեսիդ թուքին.

Հա՛, զաւակըս, աս էր, ըսիր չի զիտցայ,
Ականջս չի մոտաւ, ի՞նչ չուտ ալ մոտցայ.
«Ախ, մարիկ կըսէկիր, վիճակնիս աս է,
Աս իմին քաշածըս խըրատ է, դաս է :
Երբ որ խօսինք խօսինք՝ թոքերնիս խոցուի,
Ամէն դուռ երեսնուս մէկէն կը գոցուի.
Ծակ-աչքին չըտեսին կըլլանք աչքի փուշ,
Կամ կիյնանք կը մեռնինք կամ կըլլանք ապուշ :

*
* *

Գարագաշ զաւակըս, թշուա՛ռ Մըկրտիչ,
Քեզ ինտո՞ր նետեցին զըպրոցէն Փըրկիչ.
Վարժապետին ասա՞նկ պէտք է յորելեան,
Սպրի՞ն մենծ-աղաներ, հազա՞ր յաւիտեան:

Աշխարհք զըլիուսնեղ է, ի՞նչ ըսի չիյտեմ,
Էս ալ ինչ մենծերն ո՞վ եմ որ դատեմ.
Դիտեմ լեզուս տըսի, ցնդեր եմ պառաւ,
Ի՞նչ ընեմ, ձեռքըս չէ, զաւակըս մեռաւ:
Ա՛խ, զաւակըս մեռաւ, չունիմ միտիթար,
Չունիմ հանգստութի՞ն, չունիմ դուլդարար.
Կեանքն արցունքի զինով ետ առնել կըլլա՞յ,
Զաւկին մօտեցողը մինչեւ ե՞րբ կուլայ,
Աստուած, քուկդ էր տղաս, ալ հերիք լսցի,
Քու իսկքէդ տեկի ես չեմ խելացի.
Սըրտիս ուրախութիւն դուռ տըւիր դուն առ,
Չներէ զանգատներուս, մայր մըն եմ թշուառ :

* * *

ՆՈՐ ՓԵՍԱՆ



Բաղիկը բաղ բաղ,
Թեւերը չաղ չաղ.
Բարով եկար մեր փեսան,
Մէկ փէշը կարճ մէկն էրկան:

Խուլիկ կաղ կուր ու կուզէ,
Էլէր աղջիկ ալ կուզէ.
Մեծ անունը հաց ուսող,
Գլխու փորձանք սրտի դող:

Դարտակ քսակ անկուտի,
Խելքէ պակաս տանկուտի.
Տուէք ուտէ . երկըննայ,
Անանկ էրիկն էրկըննայ:

Բարով եկար մեր փեսան.
Մէկ փէշը կարճ մէկն էրկան.
Բաթիկը բաղ բաղ,
Թեւերը չաղ չաղ:



ՀԵՂԻՆԱԿԻՆ ԴՈՒՇԵՄԸ

	ԴՐ	ՓՄ.
Սփոփանի Ռամկին (սպառած)	5	—
Իրական Կեանին Նուազներ (Ա. Տպ. սպ.)	2	20
» » » (Բ. «)	2	—
Քնարիկ. Ժողովրդական Երգեր	1	



ՀՅ Ազգային գրադարան



NL0627815

ՀՅ Ազգային գրադարան



NL0627814

ՀՅ Ազգային գրադարան



NL0627813

